ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 ապրիլի 2014 թվականի N 54-Ա

2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-ԻՆ <<ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ <<ԿԱՊԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 7 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՆՈՒՄ ՊԱՅԹՅՈՒՆԻ ԴԵՊՔՈՒՄ>> ԹԵՄԱՅՈՎ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013թ. հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» N10-Ա որոշմամբ հաստատված պլանի 14-րդ կետի 14.1 ենթակետի և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի 23.03.2014թ. N20/218 զեկուցագրի, **որոշում եմ՝**

1. 2014 թվականի ապրիլի 18-ին անցկացնել <<Որոնողափրկարարական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը <<Կապանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 7 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում պայթյունի դեպքում>> թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն:
2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Ա. Հարությունյանին:
3. Ուսումնավարժության ղեկավար Ա. Հարությունյանին՝ ապահովել նախապատրաստական աշխատանքների իրականացումը, փաստաթղթերի մշակումը և ծանոթացումը ուսումնական վարժության մասնակիցներին:
4. Ուսումնավարժությունում ընդգրկել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը, <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ Սյունիքի ԳԳՄ, ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժինը, <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ, ՀՀ Սյունիքի մարզի <<Կապանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 7 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը:
5. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2014թ. ապրիլի 9